



ԽՈՐԵՆ ՄՆԻԹԱՐՅԱՆ

ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ,
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

ՀՀ ԲԱՆԿԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Ժամանակակից պայմաններում ՀՀ բանկային համակարգում կա բացառիկ սուր մրցակցություն՝ հատկապես վարկային շուկայում իրականացվող տարատեսակ գործառնությունների ոլորտում, և գրեթե բոլոր բանկերը փորձում են քայլել արտաքին միջավայրի պահանջներին համահունչ՝ մշտապես աշխատելով մեծացնել իրենց վարկային փաթեթը՝ հարմարեցնելով այն շուկայի պահանջներին: Սակայն, մյուս կողմից էլ՝ վարկային շուկայում վերջին տարիներին նկատվում է վարկային պայմանների ակնհայտ խստացում՝ պայմանավորված ժամկետանց վարկերի բարձր տեսակարար կշռով: Ֆինանսական կայունության ապահովման և բանկերի վարկային քաղաքականության կատարելագործման համար Կենտրոնական բանկի կողմից առավել լայն աշխատանքների ծավալումը բանկերում և վարկային կազմակերպություններում, վարկային ռիսկերի գնահատման և մշտադիտարկման առումներով, ուղղակի անհրաժեշտություն է: Մասնավորապես՝ ֆինանսական հաստատությունների զարգացման վերաբերյալ ավելի ճշգրիտ և համակողմանի պատկերացում կազմելու համար նպատակահարմար է ստեղծել բանկային հատվածի զարգացումների ֆինանսական ծրագրավորման ինստիտուտ, որի հիմքում կդրվեն բոլոր բանկերի կանխատեսումները՝ հաշվի առնելով ինչպես բանկերի պատմական փորձը, այնպես էլ ռազմավարական ծրագրերը, կանխատեսվելիք տնտեսական զարգացումները:

Հիմնաբառեր. վարկային քաղաքականություն, ծախսերի արդյունավետության ցուցանիշ, կորպորատիվ հաճախորդների վարկավորում, վար-

*Կային ռեսուրսների հասանելիություն, վարկային պատմություն,
բանկային տոկոսադրույքների օպտիմալ հարաբերակցություն*

JEL: G21, G24, G29, G32, G38, G39

Բանկի վարկային քաղաքականությունն արտացոլում է բանկի վարկային գործունեության ընդհանուր փիլիսոփայությունը և ռազմավարական հիմքերը՝ հանդես գալով որպես վարկավորման ոլորտում տվյալ բանկի մարտավարական գործողությունների, ընթացակարգերի և ներքին փաստաթղթաշրջանառության ամբողջություն:

Մեկ այլ սահմանման համաձայն՝ բանկի վարկային քաղաքականությունն արտահայտում է վարկերի և վարկային գործիքների տրամադրման հիմնական սկզբունքները՝ սահմանելով վարկառուների հիմնական խմբերը, վարկի տրամադրման գործընթացը, դրա նկատմամբ վերահսկողությունը և վարկային փաթեթի գնահատման հիմնական չափանիշները¹:

Տվյալ առևտրային բանկի կողմից մշակվող որոշակի վարկային քաղաքականությունը կախված է մի շարք մակրո- և միկրոտնտեսական գործոններից: Այսպես՝ մակրոտնտեսական գործոններից առավելապես կարևորվում են.

- տվյալ երկրում առկա մակրոտնտեսական ընդհանուր իրավիճակը,
- ֆինանսական շուկաներում տիրող իրավիճակը,
- այլ ֆինանսավարկային հաստատությունների վարկային քաղաքականության առանձնահատկությունները,
- վարկային գործառնությունների իրականացման օրենսդրական սահմանափակումները և այլն:

Ինչ վերաբերում է միկրոմիջավայրին, ապա այստեղ առավելապես կարևորվում են.

- բանկային աշխատակազմի ընդհանուր որակավորումը,
- բանկային աշխատակազմի պատրաստվածությունը վարկառուների տարբեր խմբերի հետ աշխատելու առումով,
- բանկի կողմից իրականացվող տոկոսային քաղաքականության առանձնահատկությունները,
- բանկի ներուժային վարկառուների կազմն ու կառուցվածքը և այլն:

Բանկի կողմից մշակված և իրականացվող վարկային քաղաքականությունը պետք է ներառի և հաշվի առնի հետևյալ տարրերը.

- վարկավորման պայմանները, վարկավորման գործընթացի կազմակերպումը,
- վարկերի նկատմամբ մշտադիտարկումն ու ընդհանուր վերահսկողությունը,
- վարկային փաթեթի կառավարումը, այդ թվում՝ ընդունելի կառուցվածքի սահմանումը,
- վարկը հաստատող մարմինների որոշումը, իրավասությունների բաշխման սկզբունքների սահմանումը,
- վարկավորման առանձին ուղղությունների գծով սահմանափակումների և սահմանաչափերի նախատեսումը,

¹ Տե՛ս **Тавасиев А.М.**, Банковское дело: управление кредитной организацией. Учебное пособие. М., „Дело“, 2011, էջ 33:

- վարկերի ընտրության ընդհանուր չափանիշների սահմանումը,
- վարկառուների հետ տարվող ընթացիկ աշխատանքների սկզբունքների սահմանումը,
- վարկերի հնարավոր կորուստների պահուստի ձևավորումը²:

2015 թ. սկզբին ՀՀ կենտրոնական բանկը մի շարք փոփոխություններ կատարեց նորմատիվային պահանջներում, որից հետո բանկերն ստիպված եղան ավելի շատ հատկացումներ կատարել պահուստավորմանը, ինչն, իր հերթին, բացասաբար անդրադարձավ նրանց վարկավորման հնարավորությունների վրա: Դրան զուգահեռ, շուկայում կրճատվեց վարկերի նկատմամբ վճարունակ պահանջարկը, և փոխարժեքի փոփոխման սպասումների, տնտեսության հեռանկարների և սպասվող եկամուտների անորոշության հետևանքով մարդիկ դարձան ավելի զուսպ թե՛ անձնական ծախսերում, թե՛ ներդրումներում, սկսեցին առավել զգուշություն ցուցաբերել վարկային պարտավորություններ ստանձնելիս: Աձեց չաշխատող վարկերի կշիռը, մի բան, որ անդրադարձավ բանկերի ֆինանսական վիճակի վրա: Դա այսօր բանկերի թիվ մեկ խնդիրն է³:

Աղյուսակ 1

«Հաշվարկային բանկերի ծախսերի արդյունավետության ցուցանիշը 2016 թ. հունվարի 1-ի դրությամբ»

h/h	Բանկի անվանումը	Գործառնական եկամուտներ /հազ. դրամ/	Գործառնական ծախսեր /հազ. դրամ/	Ծախսերի արդյունավետության ցուցանիշը /%/
1.	Ալբա-Կրեդիտ Ազրիկոլ բանկ ՓԲԸ	21.229.967	21.340.123	100.5
2.	Ամերիաբանկ ՓԲԸ	21.090.371	13.454.260	63.8
3.	Անելիքբանկ ՓԲԸ	12.381.545	11.725.197	94.7
4.	Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ ՓԲԸ	1.060.050	1.766.376	166.6
5.	Արարատբանկ ԲԲԸ	1.299.073	5.132.542	395.1
6.	Արդշինբանկ ՓԲԸ	16.455.606	14.456.165	87.8
7.	Արմսվիսբանկ ՓԲԸ	490.418	1.954.208	398.5
8.	Արցախբանկ ՓԲԸ	1.072.501	9.278.847	862.7
9.	Բիբլոս բանկ Արմենիա ՓԲԸ	499.090	2.624.215	525.8
10.	ԲՏԱ բանկ ՓԲԸ	290.948	939.292	322.8
11.	Զարգացման հայկական բանկ ԲԲԸ	3.308.717	2.295.878	69.3
12.	ԷյՋ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան ՓԲԸ	19.515.539	11.374.169	58.3
13.	Ինեկոբանկ ՓԲԸ	12.655.282	7.498.382	59.2
14.	Կոնվերս բանկ ՓԲԸ	2.000.065	10.343.779	517.2
15.	Հայթիգնեբանկ ՓԲԸ	1.505.633	10.153.325	674.3
16.	Հայէկոնոմբանկ ՓԲԸ	5.987.578	4.998.464	83.5
17.	Մելլաթ բանկ ՓԲԸ	84.130	963.846	1145.6
18.	Յունիբանկ ՓԲԸ	2.061.746	8.875.673	430.5
19.	Պրոմեթեյ բանկ ՓԲԸ	737.836	2.044.951	277.2
20.	ՎՏԲ-Հայաստան բանկ ՓԲԸ	7.451.176	17.337.737	232.7

Միջազգային բանկային գործունեությանը բնորոշ է ծախսերի կրճատմանն ուղղված բանկային քաղաքականության միտում՝ պայմանավորված

² Տե՛ս **Шевчук Д.А., Шевчук В.А.**, Банковское дело. Учебное пособие, 2-е изд., М., „Инфра-М“, 2015, էջ 17-18:

³ Տե՛ս <http://www.ameribank.am/PressContent.aspx?id=4851&subcat=228&mt=image/jpeg&lang=33>

միջազգային ֆինանսական շուկաներում տիրող անկանոն իրավիճակներով և ֆինանսական տոկոսադրույքների թռիչքածև տատանումներով: Այս առումով, հաշվարկենք ծախսերի արդյունավետության ցուցանիշը ՀՀ բանկային համակարգում՝ 2016 թ. հունվարի 1-ի դրությամբ (աղյուսակ 1):

Ինչպես վկայում են աղյուսակի տվյալները, ՀՀ առևտրային բանկերի ծախսերի արդյունավետության ցուցանիշը, մեղմ ասած, բարվոք վիճակում չէ: ՀՀ 21 առևտրային բանկերից միայն 7-ն են աշխատում գործառնական եկամուտներ – ծախսեր հարաբերակցության դրական արդյունքով: Դրանք են Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստանը՝ 58.3%, Ինեկոբանկը՝ 59.2%, Ամերիաբանկը՝ 63.8%, Ջարգացման հայկական բանկը՝ 69.3%, Հայէկոնոմբանկը՝ 83.5%, Արդշինբանկը՝ 87.8% և Անելիք բանկը՝ 94.7%:

Ծախսերի արդյունավետության ցուցանիշի առումով ծայրահեղ վատ վիճակում է Մելլաթ բանկը (1145.6%), որի 963.846,0 հազ. դրամ գործառնական ծախսերի միայն 94.6%-ը կամ 912.239,0 հազ. դրամը պատկանում է անձնակազմի գծով ծախսերին, և թեև բանկը տարին փակել է շահույթով՝ տոկոսային բարձր եկամուտների հաշվին, այդուհանդերձ, ղեկավարությունը պետք է ուշադրություն դարձնի գործառնական ծախսերի արդյունավետությանը ևս: Ոչ բարվոք վիճակում է նաև Արցախբանկը, որի 9.278.847,0 հազ. դրամ գործառնական ծախսերի 63.6%-ը ձևավորվել է արժեզրկման ծախսերից (5.903.641,0 հազ. դրամ), իսկ, օրինակ՝ Հայբիզնեսբանկի 10.153.325,0 հազ. դրամ ընդհանուր գումարի գործառնական ծախսերի 68.6%-ը միայն (6.968.738,0 հազ. դրամ) բաժին է ընկել արժեզրկման հակադարձման և անձնակազմի ծախսերին:

ՀՀ առևտրային բանկերի անձնակազմի ծախսերի բարձր տեսակարար կշիռը գործառնական ընդհանուր ծախսերում ժամանակակից պայմաններում կարելի է դիտարկել որպես զուտ բացասական երևույթ այն առումով, որ բանկերում բարձր է, այսպես կոչված, «աշխատավարձի բևեռացման» սկզբունքը՝ ինստիտուցիոնալ մակարդակի ղեկավարության անհիմն բարձր և հիմնական սպասարկող անձնակազմի ցածր աշխատավարձերի հարաբերակցությունը: Այս առումով, բանկերը պետք է ավելի խիստ լինեն ծախսերի հարցում և փորձեն աշխատել առավել տնտեսող ռեժիմով:

Ելնելով հանրապետությունում ձևավորված բարդ սոցիալ-տնտեսական իրավիճակից՝ մեր կարծիքով, որպես ՀՀ առևտրային բանկերի վարկային քաղաքականության գերակա ուղղություն, կորպորատիվ հաճախորդների վարկավորման տեսանկյունից, պետք է դիտարկել վարկային ռեսուրսների հասանելիության մեծացումը փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտների համար: Ձեռնարկատերերն ավելի զգույշ են դարձել խոշոր ներդրումային նախագծերի իրականացման հարցում՝ մեծ ուշադրություն դարձնելով իրենց ընկերությունների ընթացիկ իրացվելիության պահպանմանը:

Անշուշտ, այսօր խնդիրներ կան փոքր և միջին գործարարությունը վարկավորելիս, օրինակ՝ գրավադրման համար անհրաժեշտ ունեցվածքի բացակայություն, գործարարության շրջանառության և ձեռնարկատիրության շահութաբերության մակարդակի նվազում, սակայն փոքր և միջին գործարարությունը համեմատաբար ավելի ձկուն է և օպերատիվ կերպով արձագանքում է շուկայի փոփոխություններին:

Օրինակ՝ ՀՀ խոշորագույն առևտրային բանկերից մեկի՝ Ամերիաբանկի գործունեության հիմնական ուղղություններից կարևորվել է վարկային ռե-

սուրսների հասանելիության մեծացումը փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտների համար: Բանկն առաջարկում է մինչև 7 տարի մարման ժամկետով վարկեր, որից 2 տարին՝ արտոնյալ պայմաններով, այսինքն՝ միայն տոկոսադրույքների մարմամբ: Բացի այդ, բանկը բացառիկ հնարավորություն է ընձեռնում հաճախորդներին՝ 3 տարվա յուրաքանչյուր 6 ամսվա ընթացքում 0,5 տոկոսով տոկոսադրույքի իջեցում է նախատեսվում վարկառուների համար, ովքեր ժամանակին են կատարում իրենց պայմանագրային պարտավորությունները, աշխատում են շահույթով, շրջանառությունը չի նվազում վարկի տրամադրման պահին: Պակաս կարևոր չէ նաև վարկի չափը, որը կարող է հասնել 15 մլն ԱՄՆ դոլարի կամ համարժեք եվրոյի⁴:

Վարկային տեղեկատվության շրջանառումն արդյունավետ կազմակերպելու համար ՀՀ կենտրոնական բանկի տեսանկյունից կարևոր խնդիր է բանկային համակարգում մրցակցության միջավայրի ձևավորումը, որի նախադրյալը կորպորատիվ կառավարման ներդրումն է: Նպատակ ունենալով Հայաստանի Հանրապետությունում խթանելու մասնավոր վարկային բյուրոների զարգացումը՝ ՀՀ կենտրոնական բանկը որդեգրել է հետևյալ մոտեցումը. վարկային տեղեկատվության շրջանառումը նպատակահարմար է իրականացնել պետական վարկային ռեգիստրի և մասնավոր վարկային բյուրոների համակարգերի համադրության միջոցով, ընդ որում, Կենտրոնական բանկը չի ընդլայնելու վարկային ռեգիստրի աշխատանքների ոլորտը (բացառությամբ շրջանառվող տեղեկատվության նվազագույն սահմանաչափը մինչև գրոյի հասցնելը) և խթանելու է ՀՀ տարածքում գործող բանկերին՝ շրջանառելու իրենց վարկային տեղեկատվությունը վարկային բյուրոների միջոցով⁵: Այսպես՝ հնարավորություն կտրվի.

- գնահատելու հիպոթեքային (սպառողական) վարկավորման ընթացքում առաջացող ռիսկերը,
- ստեղծելու վարկառուի վարկարժանության թվային գնահատում՝ վարկային քարտերի կամ հիպոթեքային (սպառողական) վարկերի տրամադրումը խթանելու նպատակով,
- խթանելու վարկային բյուրոներին, որպեսզի վերջիններս հավաքագրեն տեղեկատվություն այն սուբյեկտներից, որոնցից չի հավաքագրում վարկային ռեգիստրը, այն է՝ կոմունալ ծառայություններ մատուցող ընկերություններից, դատարաններից, ապահովագրական ընկերություններից, հետաձգված վճարումներով աշխատող կազմակերպություններից և այլն: Կենտրոնական բանկը նպատակ ունի այդ տեղեկատվության՝ բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից օգտագործմանը:

Վարկավորման գործընթացի հիմնախնդիրների մանրագնին վերլուծությունն ու վարկային արդյունավետ քաղաքականության իրականացումը կհանգեցնեն վարկային հարաբերությունների ոլորտի կատարելագործմանը և վարկային շուկայի հստակ աշխատանքին: Անդրադառնանք այդ հիմնախնդիրներից մի քանիսին:

- Տարբեր հարցումներ ցույց են տվել, որ բնակչությունը հաճախ բողոքում է վարկավորման թղթաբանությունից և բյուրոկրատական մի շարք

⁴ Տե՛ս <http://www.armbanks.am/hy/online>

⁵ Տե՛ս «Հայաստանում մասնավոր վարկային բյուրոյի ստեղծման տեխնիկական իրագործելիության ուսումնասիրություն և շուկայի ընկալման վերլուծություն», ԿԲ, հուլիս, 2006:

ընթացակարգերից: Այս խնդիրը հուզում է նաև բանկերին: Դա կլուծվի ապահովագրական շուկայի զարգացմանը զուգընթաց. քանի դեռ մենք չունենք կայուն ու գործող ապահովագրական համակարգ, փաստաթղթաբանությունը կմնա վարկավորման անբաժան և ոչ հաճելի բաղադրիչը:

- Արդիական է վարկավորման տարատեսակ կամ ապրանքային վարկ համարվող լիզինգի կիրառության շրջանակների մեծացումը: Դա, իհարկե, ուղղակի վարկավորում չէ, սակայն ձեռնարկատիրությամբ զբաղվողներին նոր և լայն հնարավորություններ է ընձեռում իրենց գործունեության ընդլայնման համար: Հայաստանում գործում են մի քանի լիզինգային կազմակերպություններ, սակայն, մեր ձեռնարկատերերը դեռևս ընտելացած չեն այս ծառայությանը, և քչերն են օգտվում դրանից: Կարծում ենք՝ Հայաստանի Հանրապետության պարագայում այն կարող է զարգանալ հատկապես գյուղատնտեսության բնագավառում: Այս ծառայության ոլորտում առավել մասնագիտացած է «ԱԿԲԱ լիզինգ» վարկային կազմակերպությունը, որը, ունենալով հաճախորդների լայն շրջանակ և բավականաչափ փորձ այս ասպարեզում, կարողանում է նվազագույնի հասցնել հաճախորդին առնչվող բոլոր խոչընդոտները: Տնտեսության վրա լիզինգի բազմակողմանի ներգործության արդյունավետությունը պայմանավորված է նաև նրանով, որ դա միաժամանակ ակտիվացնում է մասնավոր ներդրումներն արտադրության ոլորտում, բարելավում անմիջական ապրանք արտադրողների ֆինանսական դրությունը՝ բարձրացնելով փոքր և միջին ձեռնարկատիրության մրցունակության մակարդակը: Միջազգային փորձը վկայում է, որ վերջին տարիներին լիզինգային ձեռնարկությունները վերածվել են երկրների զարգացման և բարգավաճման կարևոր խթանների⁶:

- *Բազել 3* համաձայնագրի ներդրում. բազելյան նոր համաձայնագրի ներդրման աշխատանքները բանկերին կշահադրոշեն կադրերի որոշակի համալրում իրականացնել՝ ընդգծելով հատկապես բանկերի վարկային և իրացվելիության ռիսկերի կառավարման և վերլուծական գործառնությունները: Միաժամանակ, Բազել 3-ի ներդրումը հնարավորություն կտա բանկերին՝ իրականացնելու մի շարք ռիսկերի արդյունավետ կառավարում:
- Ստվերային տնտեսության բարձր մակարդակ. ստվերային տնտեսության դեռևս գոյություն ունեցող բավական բարձր մակարդակը խոչընդոտում է բանկային միջնորդության զարգացմանը:
- Կենսաթոշակային բարեփոխումներ. մասնավոր կենսաթոշակային հիմնադրամների գործունեությունը կհանգեցնի երկարաժամկետ ֆինանսական միջոցների ձևավորման:
- Ապահովագրական շուկայի զարգացում. վարկերի գրավ հանդիսացող գույքի գրանցման և ապահովագրման շնորհիվ էականորեն կնվազեցնի վարկային ռիսկը:
- Ինստիտուցիոնալ ներդրողների մուտք ՀՀ ֆինանսական շուկա. ըստ որոշ կանխատեսումների՝ գալիք մի քանի տարիները կնշանավորվեն օտարերկրյա ինստիտուցիոնալ ներդրողների՝ հայաստանյան ֆինանսական շուկա մուտք գործելով, ինչն էլ ավելի կսրի մրցակցությունը ՀՀ բանկային համակարգում:

⁶ Տե՛ս **Костерина Т.М.**, Кредитная политика и кредитные риски/Московская финансово-промышленная академия. М., „МФПА“, 2014, էջ 165:

«Հ բանկերի կողմից իրականացվող վարկային քաղաքականության արդյունավետության բարձրացման նպատակով, մեր կարծիքով, անհրաժեշտ է կարևորել հետևյալ առանցքային ուղղությունները.

Բանկերի կողմից ակտիվ վարկային քաղաքականության իրագործման և տարատեսակ սոցիալական ուղղվածության ծրագրերում ներգրավվածության աստիճանի բարձրացման շնորհիվ էապես նպաստել և օժանդակել «Հ տնտեսության կարևոր նշանակություն ունեցող ոլորտների զարգացմանը:

Այսօր, «Հ բանկային համակարգի կառավարման կատարելագործման առումով, որպես թիվ մեկ հիմնախնդիր, պետք է առանձնացնել «բանկ-իրական հատված» թույլ կապի վտանգը, ինչն էլ հետևանք է բանկերում առկա գերիրացվելիության: Ըստ այդմ՝ անհրաժեշտ է ակտիվացնել արժեթղթերի շուկայում իրականացվող գործառնությունները և նպաստել կապիտալի շուկայի զարգացմանը: Միաժամանակ, բանկերը պետք է կարողանան բազմազանեցնել իրենց պարտավորությունները, բացահայտել դրամական միջոցների ներգրավման նոր աղբյուրներ՝ առավել երկար ժամանակահատվածով, ստեղծել առևտրի ֆինանսավորման նոր միջոցներ, էապես ակտիվացնել վարկային քաղաքականությունը՝ վարկային փաթեթի բազմատեսակացման աստիճանի բարձրացման ճանապարհով:

Առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից իրականացվող վարկային քաղաքականության վերանայում, մասնավորապես՝ վարկային գործառնությունների տոկոսադրույքների նվազեցում, ինչպես նաև վարկերի վերադարձման ժամանակացույցի խախտման դեպքում տուգանքների, պատիժների և ներման հարցերի ավելի ձկուն մեխանիզմների ստեղծում:

Վարկային բարձր տոկոսադրույքների առկայությունը էապես խոչընդոտում է վարկային շրջանառության ակտիվությանը: 2016 թ. հուլիսի 1-ի դրությամբ «Հ դրամով ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի միջին տոկոսադրույքների մարժան կազմում է 4.37 տոկոսային կետ, իսկ ԱՄՆ դոլարով՝ 4.08 տոկոսային կետ: Եթե հաշվի առնենք «Հ տնտեսությունում ներկայումս տիրող բարդ սոցիալ-տնտեսական իրավիճակը և բնակչության կենսամակարդակի ու տնտեսավարող սուբյեկտների ակտիվության անկումը, ապա բարձրտոկոսային քաղաքականությունը ավելի կխորացնի բացասական երևույթները տնտեսության մեջ: Այս առումով, անհրաժեշտ է ուսումնասիրել բանկային սպրեդի բարձր մնալու խորքային պատճառները: Մասնավորապես՝ կարևոր է բացահայտել այն գործոնները, որոնք ուղղակիորեն կապված չեն ֆինանսական համակարգի հետ, ինչպես, օրինակ՝ վարկային գործարքներում գրավի առարկայի գնահատման հետ կապված խնդիրները, տնտեսությունում մրցակցային միջավայրի թերի առկայությունը կամ, կորպորատիվ կառավարման անբավարար մակարդակով պայմանավորված, թափանցիկության պակասը, ինչն իր արտացոլումն է գտնում վարկառու կազմակերպության ռիսկայնության գնահատման մեջ:

Ինչ վերաբերում է խնդրի երկրորդ կողմին՝ վարկերի վերադարձման ժամանակացույցի խախտման դեպքում տուգանքների, պատիժների և ներման հարցերի ավելի ձկուն մեխանիզմների ստեղծմանը, ապա պետք է փաստել, որ սա ևս հրատապ լուծում պահանջող խնդիր է:

«Վարկային պատմությունը» մարդու վարկային կենսագրությունն է, որտեղ արտացոլվում են նրա ստանձնած գործող և մարված պարտավորությունների ամբողջ պատմությունը, վճարումները, վճարումների ավանդական ձևերը և դրանց կատարման պարտաճանաչության աստիճանը: Փաստորեն, սա միակ փաստաթուղթն է, որ պարունակում է ամբողջական և հավաստի տեղեկատվություն վարկառուի ստանձնած բոլոր պարտավորությունների վերաբերյալ, ինչը թույլ է տալիս գնահատել նրա վարկարժանությունն ու վճարունակությունը: «Վարկային պատմության» հիման վրա կազմվում է վարկային զեկույց, որը ներառում է «նույնականացման» տվյալներ վարկառուի վերաբերյալ (անուն-ազգանուն, անձնագրային տվյալներ և այլն), ամփոփ տեղեկատվություն գործող և մարված պարտավորությունների վերաբերյալ, առանձին պարտավորություններ՝ իրենց մանրամասներով, ինչպես նաև տեղեկություններ հաճախորդի աշխատանքի վայրի, միջին եկամտի մակարդակի մասին և այլն:

Իրականում «վատ վարկային պատմությունից» կամ, այսպես կոչված, «սև ցուցակից» ազատվելը կամ արձանագրված ուշացումները «մաքրելը» գործնականում անհնար է:

Հարկ է նշել, որ, համաձայն օրենքի, վարկային զեկույցում ներառվում է միայն վերջին 5 տարվա պատմությունը. վարկային տեղեկատվությունն ունի վաղեմության ժամկետ: Այսինքն՝ 2016 թ. հունվարի դրությամբ վերջին գրառումը, որ ԱՔՌԱ-ն կարող է ներառել վարկային զեկույցներում, 2011 թ. հունվարի տեղեկատվությունն է: Դրանից վաղ կատարված ուշացումների և չկատարված պարտավորությունների նկատմամբ կիրառվում է, այսպես կոչված, «վարկային համաճարում»⁷:

Այսպիսով՝ մեկ անգամ ևս հաշվի առնելով ներկա իրավիճակի բացասական միտումները, անհրաժեշտ է այլընտրանքային տարբերակներ կիրառել՝ սեփական վարկային համբավի չարատավորման և պատժի մեղմացման հարցում: Մասնավորապես՝ պետք է կատարելագործել «հաշտության պայմանագրի» ինստիտուտը և լրացուցիչ հնարավորություններ տրամադրել վարկառուին՝ պարտավորությունների կատարման համար:

«Պահպանողական, հավասարակշռված վարկային քաղաքականություն (չափավոր աճի ռազմավարություն)», թե՞ «ակտիվ, էքսպանսիոնիստական վարկային քաղաքականություն (աճի ռազմավարություն)»:

Այս հարցը միանշանակ պատասխան չի կարող ունենալ: Բանկի վարկային քաղաքականությունը կոչված է ապահովելու ինչպես բանկի սեփական, այնպես էլ հաճախորդների ներդրումային ակտիվների պրոֆեսիոնալ կառավարումը և վարկային գործառնությունների իրականացման արդյունքում եկամտների ստացումը: Հետևապես՝ բանկը պետք է որոշակի վարկային քաղաքականություն մշակի՝ հաշվի առնելով արտաքին և ներքին գործոնները, ինչպես նաև բանկային շուկայում տիրող մրցակցության և մրցակիցների ագրեսիվության աստիճանը: Բանկի վարկային քաղաքականության հիմքում պետք է լինեն հետևյալ սկզբունքները՝

ա) իրատեսություն (առաջադրված նպատակների և խնդիրների իրականացման բավարար հիմնավորումների առկայություն),

⁷ Տե՛ս <http://www.banks.am/am/news/interviews/11715/>

- բ) գնահատելիություն (վարկային գործարքների կատարման արդյունքների գնահատման հնարավորություն՝ ըստ տվյալ ժամանակահատվածի),
- գ) ներդաշնակություն (վարկային քաղաքականության և բանկի ֆինանսատնտեսական գործունեության միջև պատճառահետևանքային կապի, վարկային քաղաքականության ընդհանուր տրամաբանական ընթացքի առկայություն),
- դ) որոշակիություն (վարկային քաղաքականության՝ ըստ էության ներկայացում, դրանից դուրս ավելորդ տեղեկատվության բացակայություն, խնդիրների համակողմանի դիտարկում):

«Պետական պարտատոմսերի շուկա – վարկային շուկա» օպտիմալ հարաբերակցության սահմանում:

Խնդիրն այն է, որ մինչև վերջին տարիները դիտվում է մի բացասական երևույթ. պետական պարտատոմսերի բարձր եկամտաբերությունը գայթակղում է առևտրային բանկերին՝ ձեռք բերելու դրանք՝ ի հաշիվ տնտեսության վարկավորման: Այլ կերպ ասած՝ թանկ փողեր ներգրավելով, պետությունը ներդրումային ռեսուրսները դուրս է մղում շուկայից և տնտեսությունը թողնում առանց փողի⁸: Այս փաստը հիմք հանդիսացավ՝ ֆինանսների նախարարությանը մեղադրելու «ֆինանսական բուրգի» կառուցման մեջ: Փաստորեն, տնտեսական ակտիվությանը խթանելու նպատակով բանկերի ազատ վարկային ռեսուրսներն ուղղվում են պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորմանն ու պետական ներքին պարտքի ավելացմանը:

Աղյուսակ 2

«Վ պետական ներքին պարտքի շարժընթացը 2016 թ. /մլն դրամ/»*

	31.12.2015	30.04.2016	31.052016	30.06.2016	Փոփոխությունը
Ներքին պարտք	368 363.3	382 930.2	403 848.6	416 709.5	12 860.9
այդ թվում՝					
«Վ ռեզիդենտների կողմից ձեռք բերած պետական պարտատոմսեր	320 019.5	337 897.4	358 913.1	373 804.5	14 891.4
«Վ ռեզիդենտների ձեռք բերած արտարժույթային պետական պարտատոմսեր	47 382.3	40 752.7	40 671.8	38 653.2	-2 018.6
Վարկեր և փոխառություններ	0	0	0	0	0
Ներքին երաշխիքներ	961.5	4280.1	4 263.7	4 251.8	-11.9
Փոխարկման համար կիրառված «Վ դրամ / ԱՄՆ դոլար փոխարժեքը	483.75	478.61	477.66	476.33	x

* Աղբյուրը՝ «Վ ԱԿԾ պաշտոնական տեղեկատվություն. http://armstat.am/file/article/sv_06_16a_221.pdf

Ինչպես վկայում են աղյուսակում զետեղված տվյալները, պետական ներքին պարտքի առյուծի բաժինը բաժին է ընկնում «Վ ռեզիդենտների կողմից ձեռք բերված դրամային և արտարժույթային պետական պարտատոմսերին (2016 թ. հուլիսի 1-ի դրությամբ՝ շուրջ 99%-ը):

⁸ Տե՛ս <http://archive.168.am/am/articles/27948>

Այս բացասական երևույթից խուսափելու նպատակով անհրաժեշտ է նախևառաջ ՀՀ կենտրոնական բանկի միջամտությունը ինչպես տոկոսադրույքների օպտիմալ հարաբերակցության սահմանման, այնպես էլ ֆինանսական շուկաներում հավասարակշռության ապահովման և բանկային մրցակցության համար հավասար պայմանների ձևավորման առումներով:

Բանկերի կողմից վարկային քաղաքականության «միջազգայնացումն» ու հայկական բանկերի՝ միջազգային ֆինանսական կառույցներին հետագա միասնացումը:

Միջազգային շուկաներին հայկական բանկերի ինտեգրման հիմնական ուղիներն են ֆինանսական ենթակառուցվածքները, կապիտալի շուկան և առանձին ֆինանսական հաստատությունների հետ գործընկերային հարաբերությունները (B2B): Ֆինանսական ենթակառուցվածքների տեսանկյունից Հայաստանը բավարար չափով ինտեգրված է միջազգային շուկաներին: Խոսքը վերաբերում է թղթակից բանկերի հետ հարաբերություններին, SWIFT համակարգին, Fitch և Moody's գործակալությունների կողմից բանկերի վարկանշմանը, Հայաստանում NASDAQ OMX-ի ներկայությունը և այլն⁹:

Գործընկերային հարաբերությունների տեսանկյունից՝ նշված կապն ապահովվում է միջազգային ֆինանսական հաստատությունների հետ համագործակցությամբ՝ ներգրավված վարկերի, առևտրի ֆինանսավորման գործիքների և տարբեր վարկային ծրագրերի միջոցով: Ինտեգրման նշված ուղին մեծ դեր է խաղում Հայաստանի բանկային համակարգի զարգացման գործում:

Կապիտալի շուկայի ազդեցությունը, սակայն, չնչին է, քանի որ Հայաստանում, ցավոք, այն դեռևս գտնվում է զարգացման սկզբնական փուլում: Ներքին շուկայում գործունեություն ծավալելուց բացի, հայկական բանկերը պետք է մտածեն միջազգային հիմնական հարթակներում եվրոպարտատոմսերի թողարկման կամ առաջնային հրապարակային տեղաբաշխման (IPO) մասին:

Ներկայիս ժամանակաշրջանը բնութագրվում է թույլ տնտեսական ակտիվությամբ և աշխարհաքաղաքական ու տնտեսական որոշակի ռիսկերի առկայությամբ: Այդուհանդերձ, անհրաժեշտ է կարևորել միջազգային ֆինանսական հաստատությունների հետ ՀՀ բանկերի համագործակցության մի կարևոր գործոն: Բոլոր այդ ֆինանսական հաստատությունները բանկերի նկատմամբ ներկայացնում են բազմաթիվ պահանջներ, որոնք ամրագրվում են վարկային պայմանագրերում: ՀՀ բանկերը պետք է համապատասխանեն ֆինանսական որոշակի չափանիշների՝ կապիտալի համարժեքություն, վարկային ռիսկ, պետք է պահպանեն բնապահպանական և սոցիալական պատասխանատվության նորմերը, կորպորատիվ կառավարման չափանիշները: Մի կողմից՝ սա սահմանափակում է գործողությունների ազատությունը և, որոշակի առումով, բարդացնում բանկի կառավարումը: Սակայն, միևնույն ժամանակ, բանկի զարգացումը դառնում է ավելի շարունակական և հավասարակշռված: ՀՀ բանկերի կողմից իրականացվող վարկային քաղաքականությունը և բոլոր գործընթացները պետք է համապատասխանեցվեն նշված պահանջներին: Վերջիվերջո, այս ամենն ուղղված է ֆինանսական միջնորդության որակի, հետևաբար՝ նաև Հայաստանի Հանրապետության տնտեսության կառուցվածքի և ֆինանսական շուկաների բարելավմանը¹⁰:

⁹ Տե՛ս <http://nyut.am/?p=123077&l=am>

¹⁰ Տե՛ս <http://nyut.am/?p=123077&l=am>

Օգտագործված գրականություն

1. Тавасиев А.М., Банковское дело: управление кредитной организацией. Учебное пособие. М., „Дело“, 2011.
2. Шевчук Д.А., Шевчук В.А., Банковское дело. Учебное пособие, 2-е изд., М., „Инфра-М“, 2015.
3. Костерина Т.М., Кредитная политика и кредитные риски / Московская финансово-промышленная академия. М., „МФПА“, 2014.
4. «Հայաստանում մասնավոր վարկային բյուրոյի ստեղծման տեխնիկական իրագործելիության ուսումնասիրություն և շուկայի ընկալման վերլուծություն», ԿԲ, հուլիս, 2006:
5. <http://www.ameribank.am/PressContent.aspx?id=4851&subcat=228&mt=image/jpeg&lang=33>
6. <http://www.ambanks.am/hy/online>
7. <http://www.banks.am/am/news/interviews/11715/>
8. <http://archive.168.am/am/articles/27948>
9. <http://nyut.am/?p=123077&l=am>

ХОРЕН МХИТАРЯН

Начальник отдела науки и аспирантуры АГЭУ,
кандидат экономических наук, доцент

Пути повышения эффективности кредитной политики банков РА. – В современных условиях в банковской системе РА существует острая конкуренция, особенно в сфере различных операций, осуществляемых на кредитном рынке, в результате которых практически все банки пытаются идти в соответствии с представляемыми требованиями со стороны внешней среды.

Однако, с другой стороны, в последние годы на кредитном рынке очевидны серьезные ужесточения кредитных условий, которые обусловлены высоким удельным весом просроченных кредитов. Для обеспечения финансовой стабильности и усовершенствования кредитной политики банков, осуществление широкого спектра работ со стороны Центрального банка в банках и кредитных организациях, для оценки кредитных рисков и непрерывного мониторинга является необходимостью. В частности, для более глубокого и правильного представления о развитии финансовых учреждений, целесообразно основать институт финансового программирования развития банковского сектора, в основу которого будут положены отдельно взятые прогнозы всех банков, учитывая как исторический опыт банков, так и представленные ими стратегические программы, прогнозируемое экономическое развитие.

Ключевые слова: кредитная политика, показатель эффективности затрат, кредитирование корпоративных клиентов, доступность кредитных ресурсов, кредитная история, оптимальное соотношение банковских процентных ставок.

JEL: G21, G24, G29, G32, G38, G39

KHOREN MKHITARYAN

The Head of Science and Postgraduate Division,
Associate Professor at ASUE, PhD in Economics

Ways to Increase Credit Policy Efficiency of Banks in the RA. – In modern conditions, in the banking system of the RA there is an intense competition, especially in the sphere of credit market's various operations as a result of which practically all the banks try to move according to represented requirements from an external environment.

However, on the other hand in the credit market, serious restrictions of credit conditions have recently existed which are caused by high relative density of the delayed credits. Continuous monitoring is necessary for the maintenance of

financial stability and improvement of credit policy of banks, the realization of wide spectrum of work from the Central Bank in commercial banks and credit organizations and for the estimation of credit risks. In particular, for deeper and correct representation of financial institutions development, it is expedient to found the institute of financial programming of banking system to forecast the banks' activities, predicted economic developments.

Key words: *the credit policy, a parameter of efficiency of expenses, crediting corporate clients, availability of credit resources, credit history, an optimum parity (ratio) of bank interest rates.*

JEL: G21, G24, G29, G32, G38, G39